



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ**

**N 14 - Ա**

**01 փետրվարի 2017 թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.37-րդ, 1.38-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1381-Ա հրամանը

**որոշում եմ՝**

1. Հաստատել 2017 թվականին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

1) վարչական հսկողության գործընթացը իրականացնելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 գրություններով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության

բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված, Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարերով.

2) անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների.

3) մասնագիտական հսկողություն իրականացնելիս, անհրաժեշտություն առաջանալու դեպքում, աշխատանքային խմբում ներգրավել մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան, կազմել արձանագրություն:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված  
 ՀՀ Գեղարքունիքի մարզպետի  
 2017թ. փետրվարի 01 - ի  
 N 14-ՁԽ որոշման

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
 ԲՆԱԳԱՎԱՌԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ  
 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

h/h	ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐ
1	ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ	ԱՂԵԿՅԱՆ ԱԼԲԵՐՏ մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
2	ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԶԱԳԱՆ մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
3	ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
4	ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ
5	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԽԱԶԱՏՐՅԱՆ ՎԻԳԵՆ մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության առողջապահության բաժնի վարիչ
6	ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՄԱՐԱՏ մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ

7	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՕՀԱՆՅԱՆ ՍԻՐԱՍ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ
8	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ
9	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԻԿ մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ
10	ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՂԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ
11	ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆԴԻԿ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի վարիչ
12	ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ՍԱՖԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության կրթության բաժնի վարիչ
13	ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ՉԱՐՎԱԴԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
14	ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ	ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ

